10030641

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00 37410) 511770, Ֆաքս: (00374 10) 511757

№ ԴԴ-1 Ն-6369
«29» նոյեմբերի 2011թ.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

**Ի պատասխան Ձեր 28.10.2011թ.**
**թիվ 15.1-06/1133-11 գրության**

Հարգելի պարոն Ջավադյան,

Կից ուղարկվում է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ դատական դեպարտամենտի կարծիքը:

Առդիր՝ 1 էջ:

**Հարգանքով՝**

ՄԻՍԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կատարող՝ դատական պրակտիկայի
ամփոփման վարչություն, հեռ. 511-738

**ԿԱՐԾԻՔ**
**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

1. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով /այսուհետ՝ Նախագիծ/ առաջարկվող լրացումները՝ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվող որոշ նոր հոդվածների (204.3 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 204.5 հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետ, 204.6 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 204.7 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 204.8 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 204.9 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ, 204.10 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ և այլն) սանկցիաների խստության առումով, անընդունելի են, քանի որ դրանք ակնհայտորեն չեն համապատասխանում ՀՀ գործող քրեական օրենսգրքի քրեաիրավական նորմերով պաշտպանվող նույնաբնույթ, համասեռ հասարակական հարաբերությունների խախտման համար նախատեսված պատիժներին: Նման մոտեցման արդյունքում կխախտվի քրեաիրավական նորմերով պաշտպանման ենթակա հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ ու բավարար հավասարակշռությունը:

2. Նախագիծը կառուցվածքային առումով չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Մասնավորապես, նորմերը ներկայացված չեն հերթական համար ունեցող հոդվածների տեսքով, իսկ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններում և Հայաստանի Հանրապետության օրենքներում նորմերը ներկայացվում են հերթական համար ունեցող հոդվածների տեսքով:

3. Գտնում ենք, որ Նախագծում օգտագործված «եզրակացություն (հաշվետվություն)» բառերն անհրաժեշտ է փոխարինել «եզրակացություն կամ հաշվետվություն» բառերով, քանի որ դրանք միմյանցից էականորեն տարբերվող հասկացություններ են: Ավելին, ենթադրվում է, որ տվյալ դեպքում Նախագծի հեղինակները «հաշվետվություն» բառն օգտագործել են որպես «եզրակացություն» բառի բացատրություն կամ ծանոթագրություն, մինչդեռ այս հանգամանքը չի բխում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներից: Մասնավորապես, հիշյալ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում բացատրություններ կամ ծանոթագրություններ չեն տրվում: Բացատրությունների կամ ծանոթագրությունների տեքստը տրվում է առանձին հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների տեսքով:

4. Ամբողջ նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներին:

**ԿԱՐԾԻՔ**
**«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան: